

շապես մակրայ, երբ հեղինակը զ նախդիրով և ո հոդով մատնանշել է, որ դա պատկանում է իր առջև գտնվող բառին, և հետո ծնունդիս ձևը արդի ընթերցողը կհասկանա իմ ծնունդի և ոչ ուրիշ բան: Մինչդեռ այնտեղ ո հոդը դրված է մոտիկ օրը ցույց տալու համար:

Օրինակները անվերջ կարելի է շարունակել:

բայց մենք վերցրել ենք միայն թարգմանության մի բանի հատվածները և այն էլ ոչ մասն-րամասն քննությամբ, որ գրախոսության հնարավորություններից դուրս է:

Հետևությունը պարզ է. «Շիրակացու «Մատենագրություն»-ը նորից պետք է թարգմանվի: Բանասիր. գիտ. զննողը Վ. Դ. ԱՌԱՔԵՆՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *IRÉNÉE DE LYON. Nouveaux fragments arméniens de l'Adversus Haereses et de l'Epideixis. Introduction, traduction latine et notes par Charles Renoux. „F. Graffin, Patrologia Orientalis, t. XXXIX, fasc. 1, № 178“, Brepols, Turnhout/Belgique, 1978.*

ԻՐԵՆԵՈՍ ԼՈՒԳՈՒՆԱՅԻ, Հայերեն նոր հատվածներ «Ընդդիմ հերձուհ» և «Ցոյց» երկերից. Ներածություն, լատիներեն թարգմանություն և ծանոթագրություններ Շարլ Ռենուի, Տյուրքնհաուտ—Բելգիա, 1978:

Հայ թարգմանական գրականության նշանավոր հուշարձաններից է Իրենեոս Լուզոնացու (մահ. 203 թ.) «Ցոյց» առաքելական քարոզության «Մատենագրություն»-ը, որը լույս է տեսել 1907 թ.¹, գիտական աշխարհի կողմից գնահատվելով որպես տարվա կարևորագույն գյուտը հայրաբանական գրականության բնագավառում²: Նման բացառիկ գնահատությունը բացատրվում է նրանով, որ Իրենեոսի ինչպես այս, այնպես և մյուս հայտնի աշխատության՝ «Ընդդիմ հերձուհ» երկի հունարեն բնագրերը կորած են: Վերջինս, որ բաղկացած է հինգ գրքերից, պահպանվել է հնագույն լատիներեն թարգմանությամբ: «Ընդդիմ հերձուհ» երկի հայերեն թարգմանությունից մեզ են հասել միայն չորրորդ և հինգերորդ գրքերը³, որոնք նույնպես

կարևոր նշանակություն ունեն Իրենեոսի գրական ժառանգության ուսումնասիրման համար:

Իրենեոսի նշված երկասիրությունները, որոնք հետադոտոգների կարծիքով հայերեն են թարգմանվել V դարի երկրորդ կեսին հունարեն դպրոցի ներկայացուցիչների կողմից, մեծ հեղինակություն են վայելել հայ մատենագրության մեջ և տարբեր ծավալի հատվածներով հաճախ վիճակոչվել դավանաբանական քաղվածու հակաճանաչություններում, ինչպես օրինակ, Կոմիտաս կաթողիկոսի «Կնիք հաւատոյ» (VII դար) և Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» (XIII դար) հանրահայտ ժողովածուներում: Նման մի քաղվածաշար է նաև Ղայաթի Ձ 54 հայերեն ձեռագիրը, որն այժմ պահվում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանում, և որի ընդարձակ նկարագրությունը տվել է Բ. Կյուլեսերյանը⁴:

Այս քաղվածաշարը, սակայն, մի էական հատկանիշով տարբերվում է «Կնիք հաւատոյ» և «Արմատ հաւատոյ» ժողովածուներից: Եթե վերջիններում բնագրական վկայակոչումները դասավորված են ըստ համապատասխան դավանաբանական խնդիրների, ապա Ղայաթի Ձ 54-ում գրում է նյութերն ընդօրինակված են հեղինակների ժամանակագրության համարյա անխախտ

¹ S^h Des heiligen Irenaeus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung, in armenischer Version entdeckt, herausgegeben und ins Deutsche übersetzt von K. Ter-Mekerttschian und E. Ter-Minassiantz, Leipzig, 1907. Նույնը միայն գերմաներեն թարգմանությամբ լույս է տեսել նաև 1908 թ.: Իրենեոսի այս դործը թարգմանվել է նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և մեկ անգամ ևս գերմաներեն (Ս. Վերերի կողմից):

² S^h Ե. Տեր-Մինասյան, Կարապետ եպ. Տեր-Մկրտչյան (մահախոսական), «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», հատ. Ա—Բ, էջմիածին, 1921—1922, էջ 312—313:

³ Irenaeus, Gegen die Häretiker, Buch IV u. V, in armenischer Version entdeckt von K. Ter-Mekerttschian, heraus-

gegeben von E. Ter-Minassiantz, Leipzig, 1910.

⁴ S^h Բաբգեն աթոռակից կաթողիկոս (Կյուլեսերյան), Ցուցակ ձեռագրաց Ղայաթի Ազգային մատենադարանի հայոց, Անթիլիաս, Լիբանան, 1961, էջ 311—348:

կարգով՝ Քրիստոնեական եկեղեցու հեղինակություններ՝ Գրիգոր Սքանչկագործի, Աթանաս Աղեքսանդրացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու, Բարսեղ Կեսարացու, Կյուրեղ Աղևսանդրացու և այլոց շարքում պատշաճ տեղ է հատկացված նաև Իրենեոս Լուզդոնացուն, որի երկերից սույն քաղվածաշարում ընդգրկված են 65 մեծ ու փոքր հատվածներ, այդ թվում՝ 7 հատված «Ընդդեմ հերձուածոց» աշխատության առաջին գրքից, 2 հատված՝ երկրորդ գրքից, 16 հատված՝ երրորդ գրքից, 15 հատված՝ չորրորդ գրքից, 12 հատված՝ հինգերորդ գրքից և վերջապես 13 հատված՝ «Յուդեոս»:

Իրենեոսի այս հատվածների հրատարակությունն ու քննությունն է նվիրված Շ. Ռենուի պրիտավոդ աշխատությանը: Այն բացվում է մի ամփոփ ներածությամբ (էջ 13—28), որտեղ հեղինակը ներկայացնում է Ղալաթիայի № 54 ձեռագրի մանրամասն նկարագրությունը և անդրադառնում քաղվածաշարի բովանդակության ու մասնավորապես Իրենեոսի հատվածների առանձնահատկության հարցերին: Շ. Ռենուի հիմնական եզրակացությունները կարելի է ամփոփել հետևյալ տողերով.

Ղալաթիայի № 54 ձեռագիրը, որը պահպանվում է թե՛ սկզբից, թե՛ վերջից և այդ պատճառով էլ գրչության հանգամանքներին վերաբերող տվյալներ չի պարունակում, ամենայն հավանականությամբ ընդօրինակված է XIV դարում: Նրա ներկայացրած քաղվածաշարն իր կառուցվածքով չի համընկնում հունարենով, ասորերենով կամ հայերենով հայտնի ոչ մի համարնույթ գրվածքի: Այն անտարակույս կազմված է հայ հեղինակի կողմից, որն օգտվել է որոշ պատրաստի քաղվածուների նյութերից՝ դրանց վրա ավելացնելով բազմաթիվ նոր բնագրեր: Միանշանակ այն հետազոտողներին, որոնք Իրենեոսի երկերի հայերեն թարգմանությունները թվագրում են VI դարի վերջերով, Շ. Ռենուն եզրակացնում է, որ թեկուզ միայն այս փաստը բավական է համոզվելու համար, որ քաղվածաշարը դրանից առաջ չէր կարող ստեղծված լինել: Մի կողմ թողնելով Իրենեոսի երկերի թարգմանությունների թվագրման հարցը, նշենք, որ մեր կարծիքով խնդրո առարկա քաղվածաշարը կազմվել է շատ ավելի ուշ ժամանակներում, հավանաբար XIII դարում, քանի որ պարունակում է որոշ բնագրեր, որոնք հայերեն են թարգմանվել դրանից ոչ շատ վաղ, ինչպես օրինակ Եփրեմ Ասորու «Կտակը»:

Անցնելով Իրենեոսի հատվածների քննությանը, աշխատասիրողը ցույց է տալիս, որ նրանց հաջորդականությունը լիովին համընթաց է «Ընդդեմ հերձուածոց» և «Յուդեոս» առաքելական

բարոյությունների ամբողջական բնագրերի շարադրանքին (կա միայն խախտման մեկ դեպք 16—20-րդ հատվածներում): Շ. Ռենուն ուշադրություն է հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ հատվածներն իրար հետ կապված են «յետ քաղմաց», «յետ սակաուց», «յետ սղի», «յետ յուովից» և նման բնույթի այլ ցուցմունքներով, որոնք մոտավոր կերպով մատնանշում են հատվածի տեղադրությունն ամբողջական բնագրում: Այս փաստերը վկայում են, որ քաղվածաշարի հեղինակը ուշիուշով թերթել է Իրենեոսի երկերի բնագրերը և լիախտելով շարադրանքի ընթացքը, առանձնացրել իրեն անհրաժեշտ քաղվածքները: «Ընդդեմ հերձուածոց» երկի քսանհինգ նորահայտ հատվածները, նշված հանգամանքների առկայությամբ, միանգամայն անառարկելի են դարձնում հետազոտողների կողմից ժամանակին առաջ քաշված այն տեսակետը, որ Իրենեոսի այս աշխատությունը նույնպես հնում ամբողջությամբ թարգմանված է եղել հայերեն:

Սա է Ղալաթիայի № 54 ձեռագիր-քաղվածաշարի Իրենեոսյան հատվածների բերած հիմնական գիտական արդյունքը: Այս նկատառումով էլ Շ. Ռենուն Իրենեոսի «Ընդդեմ հերձուածոց» երկի առաջին երեք գրքերից քաղված քսանհինգ հատվածները հրատարակել է ամբողջությամբ և հանդիպողի լատիներեն թարգմանությամբ, մինչդեռ մնացած քառասուն հատվածների դեպքում բավարարվել է միայն Կ. Տեր-Մկրտչյանի հրատարակության նկատմամբ ունեցած տարբերությունների վերադարձումով: Դա չի նշանակում, իհարկե, որ այս քառասուն հատվածները բոլորովին զուրկ են գիտական արժեքից. նրանք կարող են որոշ օգնություն մատուցել Իրենեոսի երկերի հայերեն թարգմանությունների բնագրական քննության գործում և նպաստել նրանց ճշգրտմանն ու գրչական աղավաղումների վերացմանը:

Գրքի հավելվածում Շ. Ռենուն հրատարակել է Իրենեոսի երկերի ևս վեց հատվածներ Երուսաղեմի Ս. Հակոբյանց գրադարանի №№ 2331 և 2526 ձեռագրերի հիման վրա: Այս վեց հատվածները ակնհայտորեն քաղված են վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» ժողովածուից⁵:

⁵ Մինչ այժմ տարբեր աղբյուրներից հայտնի էին միայն սույն հրատարակության 4-րդ, 12-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ հատվածները:

⁶ Հմմտ. Հ. Անասյան, «Արմատ հաւատոյ»-ի աղբյուրներից. Իրենեոս Լուզդոնացի, «Էջմիածին», 1977, № 8, էջ 41—47:

2. PHILON D'ALEXANDRIE. *Quaestiones et Solutiones in Genesim, I et II, e versione armeniaca. Introduction, traduction et notes par Charles Mercier, „Les oeuvres de Philon d'Alexandrie, publiées sous le patronage de l'Université de Lyon. 34A“, Paris, 1979.*

ՓԻԼՈՆ ԱՂԵՔՍՆԵՐԱՅԻ, Մեկնութիւն Մենդոց, Ներածություն, քարգմանություն և ծանոթագրություններ Շարլ Մերսիեի, Փարիզ, 1979:

Մեր թվականության 1 դարի նշանավոր իմաստասեր և աստվածաբան Փիլոն Երրայեցու կամ Աղեքսանդրացու գրական ժառանգության մի զգալի մասը պահպանվել է միայն հայերեն թարգմանությունների շնորհիվ: Բավական է նշել, որ Փիլոնի՝ հայերենով հայտնի տասնհինգ երկերից ութի հոնարեն սկզբնագրերը կորած են: Դրանք են՝ Մենդոց և Ելից գրքերի մեկնությունները, նախախնամությանը նվիրված երկու ճառերը, ինչպես նաև՝ «Յաղագս կենդանեաց», «Ի Սամիսովն», «Յաղագս Յովնանու», «Յաղագս զԱստուած ի բարեգործութեան հուր ծախօղ անուանել» քարոզչերը: Այս բնագրերը գիտական հասարակության սեփականությունն են դարձել դեռևս 1822—1826 թթ., Մ. Ավգերյանի քննական հրատարակության և նրա իրագործած հանդիպադիր լատիներեն թարգմանության շնորհիվ:

Փիլոնի ստեղծագործության ուսումնասիրման տեսակետից վերահիշյալ երկերի շարքում իրենց կարևորությամբ առանձնանում են Մենդոց և Ելից գրքերի մեկնությունները՝ հանգամանք, որի շնորհիվ նրանք արժանացել են հետազոտողների հատուկ ուշադրությանը: 1953 թ. Ռալֆ Մարկուսը հրատարակեց այս մեկնությունների անգլերեն թարգմանությունը՝ կատարված Մ. Ավգերյանի պատրաստած հայերեն բնագրից:

7 Տե՛ս «Փիլոնի Երրայեցույ Բանք երեք շև ի լույս ընծայեալք. Ա. Բ. Յաղագս նախախնամութեան, Գ. Յաղագս կենդանեաց», աշխատասիրությամբ Մ. Ավգերեանցի, Վենետիկ, 1822. «Փիլոնի Երրայեցույ Մնացորդը ի հայտ, որ են մեկնութիւն Մենդոց և Ելից. Ճառք՝ ի Սամիսովն, ի Յովնան և յԵրիս մանկունս կամ ի հրեշտակս», աշխատասիրությամբ Մ. Ավգերեանցի, Վենետիկ, 1826: Իսկ Փիլոնի այն երկերի հայերեն թարգմանությունները, որոնց հունական սկզբնագրերը պահպանվել են, հրատարակվել են առանձին հատորով. տե՛ս «Փիլոնի Հերբայեցույ Ճառք թարգմանելու ի նախնեաց մերոց, որոց հելլեն բնագիրք հասին առ մեզ», Վենետիկ, 1892:

⁸ Philo, Supplement I: Questions and Answers on Genesis. Supplement II: Questions and Answers on Exodus (The

եվ ահա հրապարակի վրա է նշված Երեքի ֆրանսերեն թարգմանության անդրանիկ հատորը, որն ընդգրկում է Մենդոց մեկնության առաջին երկու գրքերը. հաջորդ երկու դրերը կազմելու են մի նոր հատոր, իսկ Ելից մեկնությունը՝ երրորդը: Թարգմանությունն իրագործել է հանգուցյալ արևելագետ Շարլ Մերսիեն (մահ. 1978 թ.), որը գիտական շրջանակներին հայտնի է որպես հմուտ բանասեր և հայկաբան:

Թարգմանությունը կատարվել է Մ. Ավգերյանի հրատարակած բնագրի հիման վրա, որը, ինչպես հայտնի է, պատրաստված է Վենետիկի Մխիթարյան մատենադարանի հինգ ձեռագրերի համեմատությամբ: Շ. Մերսիեն, սակայն, չի սահմանափակվել վերջինիս սոսկական վերատարադրությամբ: Օգտվելով մի շարք նոր ձեռագրերի ընձեռած տվյալներից, նա րազմաթիվ սրբագրություններ է կատարել Մ. Ավգերյանի բնագրում, արտահայտելով դրանք իր թարգմանության մեջ: Ս. Մերսիեի աշխատությունն, այսպիսով, ոչ միայն կարևոր ներդրում է փիլոնի երկերը ֆրանսիացի ընթերցողներին ծանոթացնելու գործում, այլև մի նշանակալից բայ է հայերեն թարգմանության նախնական լնացրի վերականգնման ուղղությամբ:

Ինքնուրույն գիտական արժեք է ներկայացնում թարգմանությանը կցված ընդարձակ ներածությունը (էջ 15—55), որը բաժանված է երեք գլխի: Առաջին գլուխը (էջ 15—23) հիմնականում նվիրված է Փիլոնի Մենդոց և Ելից մեկնությունները պարունակող հայերեն ձեռագրերի քննությանը: Թվարկված է 64 նոր ձեռագիր, որոնցից Շ. Մերսիեն իր թարգմանության մեջ օգտագործել է յոթը, հատկապես Մաշտոցի անվան Մատենադարանի № 2056, 5239 և Երուսաղեմի Ս. Հակոբյանց գրադարանի № 33 ձեռագրերը: Տեխնիկական դժվարությունների պատճառով հեղինակը հավանաբար իր ձեռքի տակ չի ունեցել Մխիթար Այրիվանեցու Ճառերտրի՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1500 ձեռագրի փիլոնյան բնագրերի պատճենը, որի տվյալները հետաքրքիր կարող

Loeb Classical Library), translated by Ralph Marcus, Cambridge, Massachusetts, London, First printed 1953, Reprinted 1961.

էլիս լինել մի շարք նկատառումներով: Ամփոփելով՝ ձեռագրերի համեմատության ուղղութիւնը իր կատարած բնութիւն արդիւնքները, Շ. Մերսինը եզրակացնում է, որ Փիլոնի երկերի մի նոր բնական հրատարակությունը թեև լայն չի փոխի Մ. Ալգերյանի պատրաստած բնագիրը, բայց բազմաթիւ կետերում կարող է լրարելովն աշխատել:

Ներածության երկրորդ գլխում (էջ 25—29) Շ. Մերսինն անդրադառնում է Փիլոնի Մենդոց մեկնության կառուցվածքի և հունաբան լեզվի բնութիւն հարցերին: Հայկական բոլոր ձեռագրերում Փիլոնի Մենդոց մեկնությունը բաժանված է չորս դրբի, որոնցից առաջինը պարունակում է 100 հարց-լուծմունք, երկրորդը՝ 82, երրորդը՝ 62, իսկ չորրորդը՝ 245: Սակայն հունական միջնադարյան բաղվածաշարերից հայտնի է, որ Փիլոնի սույն երկը բաղկացած է եզրի վեց դրբից, նկատի ունենալով այս փաստը, ինչպես նաև հայերեն թարգմանության շորրորդ և մյուս երեք դրբերի ծավալային անհամամասնությունը: Շ. Մերսինը Փիլոնի երկերի նախորդ թարգմանչի՝ Ռ. Մարկուսի օրինակով շորրորդ դրբը բաժանում է երեք մասի: Ըստ այս բաժանման՝ հայերեն թարգմանության շորրորդ դրբի 245 հարց-լուծմունքները բաշխվում են հետևյալ կերպ. IV դրբ՝ 1—70, V դրբ՝ 71—153 և VI դրբ՝ 154—245⁹: Ինչ վերաբերում է ներածության սույն գլխում արծարծված մյուս հարցին՝ հունարեն լեզվի բնութագրմանը, ապա դա մի թուղիկ ակնարկ է վերջինիս առանձնահատկությունների մասին:

Ներածության երրորդ՝ ամենաընդարձակ գլխում (էջ 31—55) հանգամանալից բնագրական

բնութիւնն են ենթարկված Փիլոնի մեկնության աստվածաշնչական բնաբանները: Դրանց համեմատությունը մի կողմից Աստվածաշնչի հայերեն թարգմանության Զոհրապյան հրատարակության, մյուս կողմից Յոթանասնից հունարեն բնագրի հետ, հեղինակին հանգեցրել է այն եզրակացության, որ փիլոնյան բնաբանները դարերի ընթացքում ենթարկվել են հայկական Աստվածաշնչի կանոնական բնագրի ազդեցությանը (էջ 34): Հարկ ենք համարում առանձնակի ուշադրություն հրավիրել այս եզրակացության վրա, քանի որ նույն երևույթը մեր համոզմամբ արտահայտություն է գտել նաև հայ թարգմանական գրականության մի շարք այլ հուշարձաններում: Ուշագրավ է նաև Շ. Մերսինի այն դիտողությունը, որ բուն մեկնության համեմատ աստվածաշնչական բնաբանները քիչ են կրել հունաբան լեզվի ազդեցությունը, որ բացատրվում է Աստվածաշնչի բնագրի պարզությամբ և թարգմանչին քաջածանոթ լինելու հանգամանքով (էջ 33): Շ. Մերսինի հետադետությունն այս բաժինը կարող է օրինակ ծառայել հայկական մյուս հնագույն թարգմանությունների աստվածաշնչական բնաբանների ուսումնասիրման գործում:

Դրբի հրատարակիչները մեկնության ֆրանսերեն թարգմանությանը կցել են նաև Մ. Ալգերյանի հանդիպադիր լատիներեն թարգմանությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջինս ավելի քան 150 տարի ծառայել է բանասիրությանը և վկայակոչվել բազմաթիւ ուսումնասիրություններում: Այս զեղեցիկ մտահղացումը միաժամանակ հնարավորություն է տալիս շոշափելի դարձնել Շ. Մերսինի կատարած բնագրական բարեփոխումները:

3. FOLKER SIEGERT. *Drei hellenistisch-judische Predigten. Ps-Philon: „Über Jona“, „Über Simson“ und „Über die Gottesbezeichnung, wohlthätig verzehrendes Feuer“, I, Übersetzung aus dem Aramäischen und sprachliche Erläuterungen* (Wissenschaftliche Untersuchungen zum Neuen Testament. 20), Tübingen, 1980.

ՖՈԼԿԵՐ ՋԻԳԵՐՏ, Կեղծ-Փիլոնի երեք հունա-եբրայական ֆարսեներ, քարգմ. հայերենից և լեզվական բացատրություններ, Տյուբինգեն, 1980:

Աշխատությունը նվիրված է Փիլոն Աղեբասանդադուն վերագրվող «Յաղագս Յովնանու», «Ի Սամփսոնի» և «Յաղագս զԱստուած ի բարեգործութեան հուր ծախօղ անուանել» երկերին, որոնք հայտնի են միայն հայերենով: Այս բնա-

գրերը հանդիպադիր լատիներեն թարգմանությանը հրատարակվել են 1826 թ. Մ. Ալգերյանի կողմից¹⁰: 1936 թ. Հանս Լեին առանձին գրքով կով վերահրատարակել է «Յաղագս Յով-

⁹ Այս վերջին՝ վեցերորդ գիրքը պահպանվել է նաև հնագույն լատիներեն թարգմանությամբ:

¹⁰ Տե՛ս «Փիլոնի եբրայեցւոյ Մնացորդը ի հայս...», Վենետիկ, 1826, էջ 549—619:

նանուա քարոզի հայերեն բնագիրը¹¹, Ժրագրելով հաջորդ հատորում ներկայացնել նրա անգլերեն թարգմանությունը, սակայն հեղինակի վաղահաս մահվան պատճառով այդ գործը չի ավարտվել: Ֆուկեր Զիգերտի գրախոսվող աշխատությունն, այսպիսով, կարելի է համարել Հ. Լեիի մտահղացման փոքր-ինչ ուղացած իրականացումը:

Գիրքը բաղկացած է համառոտ առաջաբանից (էջ 1—8) և նշված երկերի գերմաներեն թարգմանությունից (էջ 9—93). վերջում կցված են համառոտագրությունների, աստվածաշնչական վկայակոչումների, անձնանունների, առարկայական և հունարեն բառերի մանրամասն ցանկեր:

Առաջաբանում Ֆ. Զիգերտը արժեքավորում է նախորդ հետազոտողներին՝ Մ. Ավգերյանին և Հ. Լեիի աշխատանքը, անդրադառնում խնդրոտարկա բնագրերի բովանդակության ու հեղինակային պատկանելության հարցերին և թուցիկ ակնարկով բնութագրում հունաբան դպրոցի գործունեությունը՝ օգտվելով հիմնականում Հ. Մանանդյանի «Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները» ուսումնասիրությունից:

Մ. Ավգերյանի լատիներեն թարգմանությունը հեղինակը գնահատում է որպես միին և շատ տեղերում ոչ ճշգրիտ, չթխտելով, սակայն, որ այդուհանդերձ մեծապես օգտվել է նրանից: Ֆ. Զիգերտը չի ժխտում նաև, որ քննարկվող երեք քարոզների գնահատման հարցում հիմնականում կրկնում է Հ. Լեիի գրքուկի առաջաբանի տվյալները:

Անդրադառնալով բնագրերի հեղինակի հարցին, Ֆ. Զիգերտը գտնում է, որ նրանք չեն կարող պատկանել Փիլոն Աղեքսանդրացու գրչին, քանի որ «Ի Սամփսովն» և «Յաղագս Յովնանու» քարոզների հեղինակի մոտ փիլիսոփայական կրթության որոշակի պակաս է զգացվում, իսկ երրորդ բնագիրը ստիկյան մտածողու-

թյան կնիք է կրում: Ֆ. Զիգերտն այնուամենայնիվ անտաբակուսելի է համարում, որ այս երեք աշխատությունները գրված են հրեա հոփառի կողմից. քանի որ նրանք քրիստոնեական դափարախոսության որևէ հետք չեն պարունակում: Աշխատասիրողի կողմից նրանք դիտվում են որպես հունալեզու եբրայացիների հավաքատեղիներում ընթերցվող քարոզներ՝ նախատեսված աշխարհականների ունկնդրության համար: «Յաղագս Յովնանու», «Ի Սամփսովն» և «Յաղագս զԱստուած ի բարեգործության հուր ծախող անուանել» երկերի հայերեն թարգմանություններն, այսպիսով, կարևոր գիտական նշանակություն են ձեռք բերում, հանդիսանալով հունա-եբրայական միջավայրի գրական արտադրանքի միակ պահպանված վկայությունները:

Ֆ. Զիգերտի բուն հետազոտական աշխատանքն իր արտացոլումն է գտել բնագրերի թարգմանությանը կցված տողատակային ծանոթագրություններում, որոնց թիվն անցնում է հազարից: Ծանոթագրություններում հեղինակը մանրամասն հիմնավորում է իր առաջարկած բնագրական սրբագրությունները, նշում Մ. Ավգերյանի և Հ. Լեիի հրատարակությունների տարբերությունները, կատարում բառաբնական բնույթի բազմաթիվ դիտողություններ և հնարավորության դեպքում վերականգնում հայերեն առանձին բառերի ու դարձվածքների հունական համարժեքները, ինչպես՝ *οὐκὶναι* — *սոքոմե* — *տեա*, *համատուն* — *οὐκοφύλος*, *ամենագործ* — *πανοῦργος*, *տարացոյց* — *παράλειψα*, *օղա* — *գնաց* — *ἀερόπορος*, *արդարագործութիւն* — *δικαιοπραγία*, *Ներգործութիւն* — *ἐνέργεια* և այլն: Նման հարուստ բովանդակության շնորհիվ այս ծանոթագրություններն ինքնուրույն բնագրափյուսական արժեք են ներկայացնում և կարող են օգտակար լինել հայերեն բնագրերի նոր քննական հրատարակության պատրաստման գործում:

¹¹ Hans Lewy, The pseudo-Philonic De Jona. Part I: The Armenian Text with a critical Introduction (Studies and Documents. 7), London, 1936.